Հաշվետվություն

Տարրական մեթոդմիավորման 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների (I կիսամյակ) :

Օգոստոսյան նիստի ժամանակ դասվարները խոսեցին թեմատիկ պլանների, կատարված փոփոխությունների, ժամանակին կազմելու և ուսումնական մաս հանձնելու հարցերի շուրջ: Օգոստոսյան նիստից հետո ժամանկին կազմվել և ուսումնական մաս են հանձնել ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանները և ամբողջ կիսամյակի ընթացքում աշխատել համաձայն այդ պլանի:

2022-2023 ուստարվա տարրական մեթոդմիավորումը ձևավորվել է տարրական դասարաններում դասավանդող հետևյալ ուսուցիչներից.

Ուսուցիչ	Կրթություն	Ծանրաբեռնվածություն	Դասարան
Ն. Խաչատրյան	բարձրագույն	15	1ա
Հ. Ավդալյան	բարձրագույն	15	1բ
Ա. Նազարյան	բարձրագույն	16	2ա
Դ. Սարգսյան	բարձրագույն	16	2բ
Հ. Մեժլումյան	բարձրագույն	16	3բ
Կ. Հովսեփյան	բարձրագույն	16	3ա
Մ. Խանամիրյան	բարձրագույն	17	4բ
Մ. Հարությունյան	միջն. մասն.	17	4ա

Հոկտեմբեր ամսվանից 4ա դասարանը անցել է առարկայական ուսուցման:

Սեպտեմբերի 1-ին առաջին զանգի հանդիսավոր արարողությանը մասնակցել են տարրական դպրոցի բոլոր աշակերտները:

Հոկտեմբեր ամսին Ա տառին նվիրված բաց դասեր են անցկացրել I ա դասարանի դասվար Ն. Խաչատրյանը և Iբ դասարանի դասվար Հ. Ավդալյանը: Դասվար Ն. Խաչատրյանի նախաձեռնությամբ 1-ին ա դասարանի աշակերտները այցելել են Հ. Պարոնյանի անվան թատրոն և դիտել «Սպիտակաձյունիկը և յոթ թզուկները» ներկայացումը: Նոյեմբերին այցելել են կենդանաբանական այգի:

Հոկտեմբեր ամսին փոքրիկ միջոցառումներ են կազմակերպվել տարրական դասարաններում՝ նվիրված ուսուցչի օրվան: Հոկտեմբերի 14-ին աշակերտներն իրենց մասնակցությունն են ունեցել Երեբունի-Երևան տոնակատարությանը նվիրված կավճանկարչությանը, որը կազմակերպվել է դպրոցի բակում:

Հոկտեմբեր ամսին ներդպրոցական գրավոր աշխատանքներ տրվեցին 3-րդ և 4-րդ դասարաններում <<Մայրենի>> առարկայից: Ստուգումից պարզվեց, որ աշակերտները տվել են բավարար արդյունք: Տրված թելադրության տեքստերը համապատասխանում էին դասարանների միջին մակարդակին:

Օգոստոսի 20 -ից մինչև նոյեմբերի 7-ը Հասմիկ Մեժլումյանը մասնակցել է հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների համար իրականացված վերապատրաստման դասընթացին: Գրել և պաշտպանության է ներկայացրել ավարտական հետազոտական աշխատանք «Կրտսեր դպրոցականների մեջ համագործակցելու կարողության ձևավորումը» թեմայով: Արդյունքում վաստակել է 11 միավոր և ստացել վկայական:

Նոյեմբերի 9-ին Հ. Մեժլումյանի նախաձեռնությամբ 3-րդ բ դասարանը այցելել է Հովհաննես Թումանյանի անվան թանգարան:

Նոյեմբեր ամսին Մ. Խանամիրյանի նախաձեռնությամբ 4-րդ բ.դասարանը այցելել է Արամ Խաչատրյանի անվան թանգարան, ինչպես նաև Հովհաննես Թումանյանի անվան թանգարան:

3-րդ և 4-րդ դասարանի աշակերտները գրանցվել և ակտիվ մասնակցել են «Իմ դպրոց» ծրագրին:

Դեկտեմբեր ամսին բոլոր դասվարները իրենց դասարաններում զրույց են վարել երկրաշարժի շուրջ, ուսուցանել երկրաշարժից պաշտպանվելու տարրական գործողությունները, ծանոթացրել դպրոցի «Տարհանման պլանին»: Դասվարների հետ հանդիպում է կազմակերպվել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի մասնագետների հետ:

Դեկտեմբեր ամսին տարրական մեթոդական միավորումը համալրվել է նոր դասվարով՝ Հռիփսիմե Բաղդասարյան (3-րդ ա դասարան): Վերջինս փոխարինել է Կ. Հովսեփյանին:

Տարրական մեթոդական միավորման նախագահ է նշանակվել Ար. Նազարյանը:

Դեկտեմբերի 12-15-ը տարրական մեթոդմավորումը անցկացրել է դասալսումներ: Դասերը հետաքրքիր էին, դիդակտիկ նյութերով հագեցած: Բոլոր դասերը վերլուծվել և քննարկվել են:

Դեկտեմբերի 23-ին տարրական դպրոցի բոլոր աշակերտները մասնակցել են «Ամանորյա դիմակահանդես»-ին:

Ուսումնական պլանով նախատեսված աշխատանքները կատարված են: Բացթողուներ չկան: Ժամանակին տրվել են թեմատիկ, գործնական աշխատանքներ:

Երկու ամիսը մեկ կազմակերպվել են ծնողական հանդիպումներ, որտեղ քննարկվել են ուսումնադաստիարակչական և կազմակերպչական հարցեր: